ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ N 1

Ի պատասխան № **SILD-AFG-17 «Ախուրյան, Ամասիա, Արմավիր, Բաղրամյան, Սպիտակ, Վայք, Վեղի, Փամբակ և Թալին համայնքների համար աղբատար մեքենաների գնում /բաղկացած 4 լոտից/»** մրցույթի վերաբերյալ 14.08.2023թ. Armeps համակարգով ստացված հարցմանը ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց N 1՝

Հարգելի գործընկերներ,

Համաձայն SILD-AFG-17 Լոտ 2՝ 1 հատ Աղբատար մեքենա 9-10 խ/մ, կողային բարձումով (ունիվերսալ) Մատակարարման վայր՝ /Թալին - 1 հատ/ տեխնիկական մասնագրերի պահանջվում է կողային ունիվերսալ բարձիչ: Ցանկանում ենք նշել, որ նման բեռնատարողությամբ և թափքի ծավալով աղբատար մեքենաները նախատեսված չեն ունիվերսալ բարձիչով աշխատելու համար, քանի որ ունիվերսալ բարձիչն ունի ավելի մեծ քաշ և, հետևապես, դրա տեղադրման պարագայում մեքենայի բեռնունակությունը կարող է կտրուկ նվազել:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք սովորական մետաղական աղբամանների համար նախատեսված բարձիչը կդիտարկվի համարժեք, թե՞ ոչ:

Կանխավ շնորհակալություն:

Պատասխան՝

Հարգելի մատակարար, խնդրում ենք հայտ ներկայացնելիս առաջնորդվել մրցութային փաթեթի պահանջներով:

Հարգանքով,
Ռոզա Դանիելյան
№ SILD-AFG-17 մրցույթի քարտուղար
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
17.08.2023թ.